դարձուց Հոմերոսի դիւցազանց պատերազմաց հանդիսատեղեաց վրայ։

Իւր կնոջը հետ, որ յոյն էր, իրեն ծախքով հարիւր յիսուն գործաւորաց գլուխ կեցած Հիսարլըքի հողը քննեց 1870–1882, և հոն վեց հատ վրայէ վրայ կառուցեալ քաղաքաց հետքերը գտաւ։ Կարծեց որ հին Իլիոնի հետքերն ալ գտաւ այն շեղջակուտեալ աւերակաց երկրորդին մէջ։ Իւր գտած հնագիտական գանձերը ղրկեց 'ի Պերլին, և հոն ազգագրական թանգարան մը շինուեցաւ անոնցմով, որ այժմ իւր անուամբ կը կոչուի։

Յամի 1876 Միկէնի Ակրոպոլին աւերակներն ալ գտաւ. յամի 1884 և 1885 Տիւրոսինը։ Յամի 1871 յԱթէնս հաստատած էր իւր բնակութիւնը։

Զանազան գրուածոց մէջ նկարագրած է իւր ճամբորդութիւնքը և գտածները, և այս գրուածներն կը կոչուին այն քաղաքաց և տեղեաց անուամբք՝ զորս քններ և գտեր է։

ՕԳՏԱՒ ՖԷՕՅԷ (1821–1890)

Օգտաւ Ֆէօյէ մեռաւ 1890 դեկտեմբեր 10ին։ – Եթէ յիրաւի գրական աշխարհքն կորսնցուց իւր նշանաւոր ներկայացուցչաց մին, այլ և հոգևորականն պէտք է պատուէ այս 'ի հող իջած անձը՝ իբրև իւր արիասիրտ պաշտպանաց մին։ Անտարակոյս Օգտաւի երկասիրութեանց մէջ կան շատ պարսաւելի կտորներ, վասն զի անոնց մէջ կենաց ամենայն դժուարին և անտանելի դրից և պարագայից լուծումն կու տայ անձնասպանութեան վարդապետութեամբ. և այս բանս առանձինն կերպով կը տեսնուի Այրի (Veuve) Պատիւ Արուեստաւորի (Honneur d'artiste) կոչուած գրոց մէջ։ Բայց ատոր փոխարէն, երբ նիւթապաշտութեան և անոր վտանգաց դէմ կը խօսի՝ յայտնի կերպով կը տեսնուի անոր եռանդն և համոզումը Աստուծոյ գոյութեան, հոգւոյ աննիւթականութեան և անմահութեան և աղօթից զօրութեան վրայ։ Բաւական է իրեն երկու գլխաւոր գործերը Սիբիլլայ (Sibylle) և Մեռեալն (la Morte) կարդալ, տեսնելու համար թէ ինչպիսի այրական և գրեթէ քրիստոնէական ձիրքեր կան անոնց մէջ։ Այսպիսի երկասիրութեանց հեղինակն պէտք էր քրիստոնէաբար մեռնէր. և յիրաւի մեռաւ՝ լի երախտագիտութեամբ գրկելով զքահանայն՝ որ Աստուծոյ կողմանէ իրեն թողութիւն տալու եկած էր։

Ֆէօյէյի գրուածոց վրայ դիտողութիւններ ընելէն առաջ, կը փափաքինք հետևեալ դէպքը պատմել.

digitised by A.R.A.R.@

Արհ. Գեր. Ցիւրանլու յամի 1854 գաղղիական ճեմարանին անդամ եղաւ, և ուրի տարի ետքը յամի 1862 Պ. Լիդրէ ալ առաջին անդամ կաճառորդ ըլլալու հետամտութիւնն ունեցաւ։ Նշանաւոր եպիսկոպոսն իրեն պարտք համարեցաւ անոր դէմ պատերազմել, և աներկիւղ համարձակութեամբ շարունակ պաշտպանեց իւր դատը. ուստի գրեց Ազդ առ հարս ընտանեաց (Avertissement aux pères de famille) թերթերը, և նոր և սխալ վարդապետութեանց վտանգները բացատրեց. ապա ջանաց իւր կողմն ձգել ճեմարանին ուղղամիտ համարեալ մասն ալ, և յայսմ չի մոռցաւ զՖէոյէն ալ, որուն կրօնական գրուածին վրայ աքանչացած էր, և այս պատճառաւ անոր նամակ մ'ուղղեց, որուն սիրուն պատասխանը ընդունեցաւ, բայց ափսոս որ կորսուած է. և ըստ վկայութեան ականատես անձի մը՝ իմաստն այս էր. «Գեր. Ցէր, աշխարհիս հողմն թէ իմ և թէ իմ ժամանակցաց վրայէն անցնելով հաւատոց եռանդը պաղեցուցած է, բայց այսու հանդերձ չնորհակալ եմ որ դիս ալ կրօնական և ուղղամիտ անձանց դասուն մէջ կարգեր էք. և յիրաւի հոգւոյս խորոց մէջ կ'իմանամ այն զգացմունքները զորս ունէի երբեմն՝ մինչդեռ անոնց դէմ չէի կռուեր. բայց Հաւատամ որ առիւծի պէս պիտի պաշտպանեմ զանոնք»։— Վերջապէս յաղթեց Ցիւրանլու։

Աւասիկ հետևեալքն են Ֆէոյէյի գրուածոց նշանաւոր կտորներն.

Ա. ԳՈՅՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ.— Զեմ ըմբռներ թէ ինչպէս կարելի է տարակուսիլ աստոր վրայ... Աստուծոյ անունը այնպէս տեսանելի կերպով գրուած է իւրաքանչիւր խոտոյ, տերևոց, և աստեղ վրայ, և գիշերուան առանձնութեան, երկնից լռութիւնը այնպէս կ'աղաղակէ՝ որ սիրտս ատուգիւ կը հաւատայ, ինչպէս որ աչքերս կը տեսնեն, և չրթունքս շունչ կ'առնուն ու կու տան։

Բ.— ՎԵՐՋԻՆՔ ՄԱՐԴՈՑ.— Անմահոբիւն հոգւոյ.— ինչպիսի ցանքած ըղեղ պիտի ըլլայ այն՝ որ կարենայ այս սրբազան բառերն մերժել. Աստուած, արդարութիւն, սէր, անմահութիւն։

Գ.— ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ.— Առաքինութիւն մը ստանալու համար կարևոր եղած ջանից քառասրդը կը բաւէ սխտից հանդէս մ'ընելու... Ախտաւոր ըլլալ ուրիշ բան չէ, բայց եթէ աշխատութենէ դադրիլ, թողուլ յարատև և հուժկու ջանքը՝ զոր կամք կ'անուանեմք, ձգել թիւերը և թողուլ ինքզինքը յորձանաց։

Դ.— ԱՂՕԹՔ.— Աստուած կը լսէ իմ եռանդնալից աղօթքս.... պէտք է որ հաւատամ, բարեկամ։ Եւ մահուան վերջին կէտին՝ յուսահատութեան մէջ չիյնալու համար, կարևոր է հաւատալ Աստուծոյ մը՝ որ զմեզ կը սիրէ, և գթալիր աչք մեր տկար սրտից վիրաց վրայ կը նայի,... որ օր մ'ալ իւր հայրական ձեռաք պիտի խըզէ՝ մեր ժամանակաւոր կենաց կապանքը։

digitised by A.R.A.R.@